ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2021 թվականի N 06-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2021 թվականի փետրվարի 12-ի N06/27.2/3341-2021 գրությամբ ներկայացված փորձագիտական եզրակացությունը՝ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին>> N44-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԶԱՐԶԱՆԴ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 23-ի N06-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Բյուջեի եկամուտների մասով՝
   1) Համայնքի բյուջեի հողի իրացումից մուտքեր՝ եկամտատեսակին մուտքագրել 1080540 դրամ գումար:
   2) Համայնքի բյուջեի միջոցների վարչական մասի տարեսկզբի մնացորդ 3758522,6 դրամը և ֆոնդային մասի տարեսկզբի մնացորդ 1301602,8 դրամն՝ ընդամենը 5060125,4 դրամ գումարը մուտքագրել համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ:
2. Բյուջեի ծախսերի մասով՝
   1) Բյուջեի ֆոնդային մասի նախատեսված 6140,66 հազար դրամ գումարն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝
      1.1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 1.6.1 բաժնի՝
         ա. 5112 հոդվածին – 990,0 հազար դրամ,
         բ. 5129 հոդվածին – 1000,0 հազար դրամ,
         գ. 5122 հոդվածին – 2950,66 հազար դրամ,
         դ. 5134 հոդվածին – 200,0 հազար դրամ:
      1.2) Փողոցների լուսավորություն՝ 6.4.1 բաժնի 5112 հոդվածին՝ 1000,0 հազար դրամ:
   2) Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2600,0 հազար դրամն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝
      2.1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 1.6.1 բաժնի՝
         ա. 4239 հոդվածին – 1000,0 հազար դրամ,
         բ. 4251 հոդվածին – 1000,0 հազար դրամ,
         գ. 4269 հոդվածին – 350,0 հազար դրամ:
      2.2) Փողոցների լուսավորություն՝ 6.4.1 բաժնի 4269 հոդվածին՝ 250,0 հազար դրամ:

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի առաջին, երկրորդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Որոշումը մշակվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ղեկավարի կողմից:

Ակնկալվող արդյունքը.

1. Բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդի մուտքագրումը պայմանավորվում է բյուջեի մասին օրենքի սահմաններում:
2. Փաստացի համայնքի բյուջե է մուտք եղել 1080540 դրամ գումար, ուստի անհրաժեշտ է այն մուտքագրել որպես հողի իրացումից մուտքեր եկամտատեսակ:
3. Բյուջեի ֆոնդային մասով պլանավորված մուտքերը 6140,66 հազար դրամը բաշխվել է հետևյալ ուղղություններով՝
   1) Համայնքապետարանի շենքի կից տարածքի բարեկարգման համար՝ 990,0 հազար դրամ:
   2) Համայնքապետարանի համար պետք է ձեռք բերվի շչակ՝ 300,0 հազար դրամ:
   3) Համայնքի սեփականություն համարվող հողերի սեփականության վկայականներ ձեռք բերելու, չափագրման ծախսերի համար՝ 200,0 հազար դրամ:
   4) Համայնքի տարածքում կառուցվող խաղահրապարակի համար ձեռք են բերվելու վարչական սարքավորումներ՝ 2950,66 հազար դրամ:
   5) Կառուցվող խաղահրապարակի համար ձեռք են բերվելու այլ մեքենաներ և սարքավորումներ՝ 1000,0 հազար դրամ:
   6) Համայնքում կան չլուսավորված փողոցներ, որոշ փողոցների լուսավորություն անցկացնելու համար նախատեսվում է 1000,0 հազար դրամ գումար:
4. Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարվելիք ծախսեր՝
   1) Համայնքում կառուցվող խաղահրապարակի տարածքի կանաչապատում՝ 1000,0 հազար դրամ:
   2) Խաղահրապարակի և համայնքապետարանի շենքին հարող ներհամայնքային ճանապարհի ասֆալտի ծածկույթի ընթացիկ նորոգում՝ 1000,0 հազար դրամ:
   3) Խաղահրապարակի տարածքում ոռոգման ցանցի համար պլաստմասե խողովակների ձեռք բերման համար՝ 350,0 հազար դրամ:
   4) Փողոցների լուսավորության կառույցի վառված լամպերը փոխելու համար՝ 250,0 հազար դրամ:

Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.

Քանի որ համայնքի բյուջեի ընդունումն ավագանու կողմից նորմատիվ որոշում է, ուստի համայնքի բյուջեի փոփոխության վերաբերյալ ավագանու որոշումը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ *ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ_____ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ suren.galstyan@justice.am

№ 06/27.2/3341-2021

«12» փետրվար 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի փետրվարի 8-ի N 35 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

2/15/2021

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Մարտիրոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-124

Մուտք № 81
19 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները.

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածում ամրագրված կարգավորումները՝ Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել նորմատիվ իրավական ակտերի վավերապայմաններին ներկայացվող պահանջներին:

2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ «Նախագիծ» բառն անհրաժեշտ է գրել Նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում:

3. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:

4.Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերվում են ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 44-Ն որոշմամբ հաստատված հավելվածներին՝ Նախագծում անհրաժեշտ է նշել, որ փոփոխությունները կատարվելու են որոշմամբ հաստատված հավելվածներում:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավակարգավորման համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին): Այս առումով հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է վերանայել Նախագծին կից ներկայացված Հավելվածով ամրագրված կարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

2/12/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ